ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՏԱՆՁՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ТАНДЗУТСКИЙ МУНИЦИПОЛИТЕТ

թիվ 114
07.10. 2011թ

Արմավիրի մարզպետ

պարոն Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Տանձուտ համայնքի 2011 թվականի հոկտեմբեր ամսվա ավագանու նիստի որոշումները:

Առդիր 6 էջ:

Համայնքի ղեկավարի ժ/պ Գ. Տիգրանյան

9604-11
11 10 2011թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

06հոկտեմբերի 2011թ. թիվ 28

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

որոշեց՝

1.Հաստատել 2011թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 5 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արտակ Հերիքյան | | | |
| Սամվել Մկրտումյան | | | |
| Ջիվան Այվազյան | | | |
| Արմեն Խաչատրյան | | | |
| Տիգրան Սարգսյան | | | |

Համայնքի ղեկավար Գ.Միգրանյան

2011թվական
հոկտեմբերի 6
գ. Տանձուտ

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Տանձուտ գյուղական համայնքի
ավագանու 2011թվականի նոյեմբերի 6-ի
թիվ 28 որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Նիստի օրակարգի հաստատում

/զեկ. Մ.Հովհաննիսյան/

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող արտադրական նշանակության հողն ընդլայնման նպատակով օտարելու մասին

/զեկ. Գ. Տիգրանյան/

3.Դրամական օգնություն տալու մասին

/զեկ Գ. Տիգրանյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

06.հոկտեմբերի 2011թ. թիվ 29-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՈՂԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարմասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետով, 66-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանների ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, սերվիտուտ չի առաջացնում, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետի գ/ ենթակետը, համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը առաջարկում է՝ հաշվի առնելով այն, որ Թոռուն Խուդոյանը դիմել է իր սեփական անասնագոմը ընդլայնելու նպատակով անասնագոմին կից 405քմ հողակտորը գնելու խնդրանքով

որոշում է

1.Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող արտադրական նշանակության 405քմ հողը ընդլայնման նպատակով օտարելու ողղակի վաճառքով Թոռուն Խուդոյանին /լոտ 1, ծածկագիր 04-092-032-052/:

2.Հաստատել ողղակի վաճառքի գինը հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 214000 / երկու հարյուր տասնչորս հազար/ դրամ:

3..Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արմեն Խաչատրյան | | | |
| Արտակ Հերիքյան | | | |
| Տիգրան Սարգսյան | | | |
| Ջիվան Այվազյան | | | |
| Սամվել Մկրտումյան | | | |

Համայնքի ղեկավարի ժ/պ Գ.Տիգրանյան

2011թվական
ապրիլի 28
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06հոկտեմբերի 2011թ. թիվ 30

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

որոշեց

1.Համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի;

2. .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արտակ Հերիքյան | | | |
| Սամվել Մկրտումյան | | | |
| Ջիվան Այվազյան | | | |
| Արմեն Խաչատրյան | | | |
| Տիգրան Սարգսյան | | | |

Համայնքի ղեկավար Գ.Տեր-[illegible]յան

2011թվականի
նոյեմբերի 6
գ.Տանձուտ

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Տանձուտ գյուղական համայնքի
ավագանու 2011թվականի հոկտեմբերի 6-ի
թիվ 30 որոշման

Համայնքի բնակիչներին հատկացված դրամական օգնություն

1.Մուրադյան Էլլա Ռոլանդի----------40000դրամ

2.Գրիգորյան Գոհար Միքայելի--------40000դրամ

3.Բարդեղամնոյան Փառանձեմ----40000դրամ